ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Պ-763-20.04.2015,02.06.2015-ԱՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Զինծառայողի ստացած վնասվածքի կամ խեղման կամ ծագած հիվանդության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բուժման (հետազոտության) անհնարինության դեպքում զինծառայողի բուժումն իրականացվում է օտարերկրյա պետությունում: Հայաստանի Հանրապետությունից դուրս զինծառայողի բուժման, կեցության և ճանապարհածախսի գումարը հատկացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով: Օտարերկյա պետությունում բուժման, ճանապարհածախսի և կեցության գումարը պետական միջոցների հաշվին հոգալու իրավունքից օգտվում են մարտական հերթապահություն իրականացնելիս կամ առաջնագծում ծառայողական պարտականություններ կատարելիս վնասվածք կամ խեղում կամ դրանց հետևանքով հիվանդություն ստացած զինծառայողները, բացառությամբ, եթե ստացած վնասվածքը կամ խեղումը կամ դրանց հետևանքով ծագած հիվանդությունը *դիտավորությամբ ինքն իրեն վնաս պատճառելու* հետևանք է: Այն դեպքերում, երբ զինծառայողի բուժումն օտարերկրյա պետությունում կազմակերպելու համար անհրաժեշտ է ուղեկցող անձի ներկայություն, հատուցվում է նաև ուղեկցող անձի ճանապարհածախսը և կեցությունն օտարերկրյա պետությունում:»:

Հոդված 2. *Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա:* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի ստացած վնասվածքն արտերկրում բուժման, ինչպես նաև ճանապարհածախսի և կեցության գումար հատկացնելու կարգը և պայմանները:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակ(ներ)ը	Առաջարկությունը	Նախագծի հեղինակների եզրակացությունը
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Գագիկ Ձհանգիրյան	*Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածում «նրանց կողմից կատարված կանխամտածված օրինազանցության հետևանք է» բառերը փոխարինել «դիտավորությամբ ինքն իրեն վնաս պատճառելու հետևանք է» բառերով:*	<u>ընդունվել է,</u> նախագծում կատարվել է փոփոխություն
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հ. Հակոբյան (024) Ա. Մխիթարյան (077) Վ. Մարկոսյան (014) Ռ. Հովսեփյան (006)	*Առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովան-դակությամբ նոր պարբերությամբ.* *«Սույն օրենքի գործողությունը տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա:»:*	<u>ընդունվել է,</u> նախագծում կատարվել է լրացում
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ռուզաննա Մուրադյան	*Առաջարկում եմ Հոդված 33-ի առաջին նախադասության մեջ՝ «համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում» բառակապակցությունից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետությունում և նրանից դուրս» բառերը:*	<u>չի ընդունվել,</u> քանի որ նախագիծը չի անդրադառնում «Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամնե-րի սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրա- պետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ կարգավորվող իրավահարաբերություններին
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Կորյուն Նահապետյան	***1.*** *Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել այնպիսի խմբագրությամբ, որ ՀՀ տարածքում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բուժման (հետազոտության) անհնա-րինության դեպքում օտարերկրյա պետությունում բուժման, ճանա-պարհածախսի և կեցության գումարը պետական միջոցների հաշվին հոգալու իրավունքից օգտվեն ոչ միայն մարտական*	<u>չի ընդունվել,</u> քանի որ նախագծի սկզբնական տարբերակում նախա-տեսվում էր, որ ***<u>զինվորական ծառայության ընթացքում</u> զին- ծառայողի ստացած վնասվածքը, որի բուժումը Հայաստանի Հանրապետության տարածքում չի իրականացվում, պետք է իրա-կանացվի արտերկրում,*** սակայն, հաշվի առնելով փաստացի իրադրությունը և խնդրի առաջնային

	*հերթապահություն իրականացնելիս կամ առաջնագծում ծառայողական պարտա-կանություններ կատարելիս, այլև **զինվորական ծառայության ընթացքում** վնասվածք կամ խեղում կամ դրանց հետևանքով հիվանդություն ստացած զինծառայողները:*	թիրախայնությունն ապահովելու և մարտական պայմաններում զինվո-րական ծառայություն իրականացնող զինծառայողների հետ կապված խնդիրներին առաջնային լուծում տալու անհրաժեշտությունը՝ նախա- գիծը խմբագրվել է
	2. *Նախագծի 2-րդ հոդվածը 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «Սույն օրենքի 1-ին հոդվածի դրույթները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա»:*	ընդունվել է, նախագծում կատարվել է լրացում
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյան (127) Իշխան Խաչատրյան (130) Լևոն Դոխոլյան (128) Միեր Շահգելդյան (129)	***1.*** *Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել այնպիսի խմբագրությամբ, որ օտարերկրյա պետությունում բուժման, ճանա- պարհածախսի և կեցության գումարը պետական միջոցների հաշվին հոգալու իրավունքից օգտվեն ծառայողական պարտականություններ կատարելիս վնասվածք կամ խեղում կամ դրանց հետևանքով հիվանդություն ստացած բոլոր զինծառայողները:*	չի ընդունվել, քանի որ նախագծի սկզբնական տարբերակում նախա-տեսվում էր, որ ***զինվորական ծառայության ընթացքում զին- ծառայողի ստացած վնասվածքը, որի բուժումը Հայաստանի Հանրապետության տարածքում չի իրականացվում, պետք է իրա-կանացվի արտերկրում,*** սակայն, հաշվի առնելով փաստացի իրադրությունը և խնդրի առաջնային թիրախայնությունն ապահովելու և մարտական պայմաններում զինվո-րական ծառայություն իրականացնող զինծառայողների հետ կապված խնդիրներին առաջնային լուծում տալու անհրաժեշտությունը՝ նախա- գիծը խմբագրվել է
	2. *Նախագծի երկրորդ հոդվածը 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «Սույն օրենքի 1-ին հոդվածի դրույթները տարավում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ծագած ծառայողական պարտականություններ կատարելիս վնասվածք կամ խեղում կամ դրանց հետևանքով հիվանդություն ստացած բոլոր զինծառայողների վրա»:*	ընդունվել է հետադարձ ուժի մասով